



ՏԵՂԵԿԱՆՔ

Ովքեր կարող են համարվել քաղաքանտարկյալներ?

Քաղաքանտարկյալ եզրույթը, որպես այդպիսին, առաջին անգամ սպառնիչ մեկնաբանության է ենթարկվել և սահմանում գտել դեռևս 2001 թվականին Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարության փորձագետների կողմից՝ ՀՀ-ում և Ադրբեյջանում հնարավոր քաղաքանտարկյալների ազատագրկման կապակցությամբ: Այդ շրջանում հարցի կարևորությունը պայմանավորված է եղել երկու երկրների կողմից ԵԽ անդամակցությամբ: Փորձագետների կողմից առաջ քաշված մոտեցումը վերահաստատվել է նաև 2012 թվականին՝ Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի թիվ 1900(2012) բանաձևով¹:

Ներկայումս, չնայած Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է ինչպես Եվրոպայի Խորհրդի, այնպես էլ միջազգային մի շարք կազմակերպությունների անդամ և, ըստ այդմ, ստանձնել է մարդու իրավունքների պաշտպանության լուրջ պարտավորություններ, սակայն որոշ զարգացումներ պահանջում են վերհիշել քաղաքանտարկյալ եզրույթի բնութագրիչ չափանիշներն ու սահմանումը:

Այսպես, ազատությունից զրկված անձը կարող է համարվել քաղաքանտարկյալ՝

1. Եթե ազատությունից զրկումը կիրառվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայով սահմանված հիմնարար իրավունքների խախտմամբ, մասնավորապես՝ մտքի, խղճի ու կրոնի ազատության, արտահայտվելու և տեղեկություն ստանալու ազատության, ինչպես նաև հավաքների ազատության խախտմամբ,
2. Եթե ազատագրկումը կիրառվել է միմիայն (purely) քաղաքական պատճառներով, որևէ հանցանքի կատարման բացակայությամբ,



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

3. Եթե քաղաքական շարժառիթներով պայմանավորված՝ ազատագրկման տևողությունը կամ ազատագրկման պայմանները չեն համապատասխանում անձի կողմից կատարված հանցանքին, որում վերջինս ճանաչվել է մեղավոր կամ կասկածվում է,
4. Եթե քաղաքական շարժառիթներով պայմանավորված՝ այլ ազատագրկվածների հետ համեմատությամբ անձը պահվում է խտրական պայմաններում,
5. Եթե ազատագրկումը արդյունք է ակնհայտ անարդար դատաքննության, ինչը ունի քաղաքական շարժառիթներ

Հատկանշական է, որ տեռորիստական ակտերի համար ազատությունից զրկված անձիք քաղբանտարկյալ չեն կարող համարվել, եթե նրանց հետապնդումն ու հետագա դատապարտումը արդյունք է ներպետական օրենսդրությամբ սահմանված նման արարքների:

Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ անձը չի կարող համարվել քաղբանտարկյալ, եթե կատարել է՝

- Բռնությամբ ուղեկցված հանցագործություն անձանց նկատմամբ, բացի այն դեպքերից, երբ նման հանցագործությունը արդյունք է անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության,
- Եթե կատարել է ատելության հենքով պայմանավորված հանցագործություն անձի կամ շինության դեմ, կամ անձը բռնության կոչեր է արել ազգային, էթնիկական, ռասսայական, կրոնական կամ այլ հիմքերով պայմանավորված:

Ընդհանուր առմամբ, քաղբանտարկյալները բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի մեջ են մտնում ավանդաբար **խղճի բանտարկյալ** համարվողները, ովքեր հետապնդումների են ենթարկվել իրենց ոչ բռնի գործողությունների համար:

Օրինակ, այս խմբի մեջ են մտնում իրենց մտքի ու դավանանքի արտահայտման, խաղաղ հավաքների մասնակցելու արդյունքում ազատությունից զրկված անձինք, կամ բացառապես մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված գործողությունների ի պատասխան վրա հասած ազատագրկման դեպքերի:

Երկրորդ խումբը ներառում է այն անձանց, ովքեր պետության կողմից ենթարկվում են հետապնդումների քաղաքական շարժառիթներով:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նման դեպքերի օրինակներ են՝

- Ազատագրվումը կիրառվել է արդար դատաքննության իրավունքի խախտման արդյունքում,
- Ազատությունից զրկման որոշումը կայացվել է ապացույցների աղավաղման արդյունքում կամ հանցակազմի բացակայության պայմաններում կամ անձը ազատագրվել է մեկ այլ անձի կողմից կատարված հանցանքի համար,
- Ազատագրվման տևողությունը կամ դրա պայմանները ակնհայտորեն անհամաչափ են այն արարքին, որի կատարման մեջ մեղադրվում է անձը կամ մեղավոր է ճանաչվել,
- Անձը ազատագրվել է այլոց հետ համեմատությամբ խտրականության դրսևորմամբ:

Նշված դրսևորումներից որևէ մեկը՝ ուղեկցվելով պետական իշխանության **քաղաքական շարժառիթներով**, թույլ է տալիս քննարկել անձի քաղբանտարկյալ լինելու հարցը:

Խտրականության դրսևորմամբ ուղեկցվող դատական քննության և դրա արդյունքում վրա հասնող ազատագրվման մասին խոսելին, պետք է ուշադրություն դարձնել նաև **«ընտրովի արդարադատության»** դրսևորումներին:

Այսպես, **«ընտրովի արդարադատությունը»** իր դրսևորումը գտել է ինչպես ամերիկյան, այնպես էլ եվրոպական իրավական համակարգերում: Այս կոնցեպտի քննարկումը ուղղակիորեն կապված է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի հետ:

«Ընտրովի արդարադատության» իրավիճակները հանդիպում են այն դեպքերում, երբ ակնհայտորեն նման հանգամանքներում հետաքննությունը, դատավարությունն ու պատժի կիրառումը տարբերվում են մի շարք այլ գործերով ընթացող նույն փուլերից՝ պայմանավորված քաղաքական շարժառիթներով: Նման շարժառիթի բացակայության դեպքում, իշխանության գործողությունների բնույթը այլ է, օրինակ, անձը հնարավոր է, որ այլ պատիժ ստանար: Նման դեպքում էական չէ, թե անձը մեղավոր է, թե ոչ, որոշիչ հանգամանքը այն է, թե պատասխանատվության միջոցը այլ անձանց հետ համեմատությամբ խտրական կերպ է կիրառվել, թե ոչ: Ինչի համար անհրաժեշտ է նախ ցույց տալ, որ օրենքը անձի նկատմամբ կիրառվել է խտրականորեն:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության ընտրողական կիրառման գործոնը, ըստ այդմ, կարելի է որոշել նշանակված պատժի՝ նման այլ հանցագործությունների համար վրա հասած պատիժների հետ համեմատելու միջոցով:

Պետք է փաստել սակայն, որ նույնիսկ վերը նշված հանգամանքների առկայության դեպքում, անձը չի կարող համարվել քաղաքական բանտարկյալ, եթե կատարել է բռնությամբ ուղեկցված հանցագործություն անձանց նկատմամբ կամ ստեղծության հենքով պայմանավորված բռնի գործողություններ: Ինչի պարագայում վրա հասած պատասխանատվությունը նրանց հակաօրինական գործողությունների տրամաբանական հետևանքն է:

Հարկ է նշել նաև, որ անձին որպես քաղբանտարկյալ բնորոշելիս վերջինիս բնութագրումն ու անձնական հատկանիշները էական դեր չեն կարող ունենալ: Էական չէ նաև այն հանգամանքը, թե նա ընդդիմադիր ակտիվ գործիչ է, իրավապաշտպան, լրագրող, թե այլ հանրային կերպար: Այս հարցում կարևորը անձի կատարած արարքն է, ինչում նա մեղադրվում է, պետության արձագանքն ու իշխանության կողմից ձեռնարկված քայլերի իրական շարժառիթները:

Սուկ այն հանգամանքը, որ անձը քաղաքական ընդդիմադիր է, բավարար հիմք չի կարող հանդիսանալ վերջինիս որպես քաղբանտարկյալ որակելու համար, նույնիսկ եթե նա ազատազրկված է և դա հանրության մեջ բողոքի ալիք է բարձրացրել:

Վերջում պետք է նշել, որ ազատությունից զրկված անձանց քաղբանտարկյալ որակելու հարցում մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների դերը, ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային, այդ գործերի և կոնկրետ անձի կապակցությամբ հիմնավորված և հետևողական քայլերի ներկայացումն է՝ իրավական մեխանիզմով և օրենքով սահմանված կարգով արդարադատության վերականգնման և տվյալ անձի հիմնարար իրավունքների պաշտպանության նպատակով: